Հավելված
Արմավիրի մարզի Քարակերտ
համայնքի ղեկավարի 2019թվականի
երկրորդ կիսամյակի և տարեկան աշխատանքային
գործունեության հաշվետու ժողովի

ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ՀԱՐԹԵՆՅԱՆԻ 2019ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանցից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> , <<Իրավական ակտերի մասին>>, Հայաստանի Հանրապետության օրենքով, համայնքի ավագանու անդամների, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում հետևյալ գործունեությունը. ըստ բնագավառների

1. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

- Կատարվել է քաղաքացիների ընդունելություն սահմանված կարգով, քննության է առնվել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվել համապատասխան միջոցառումներ.
- Քաղաքացիներին տրվել է տարբեր բնույթի 827 տեղեկանքներ:
- Կայացվել է՝ համայնքի ղեկավարի 166 որոշում, ավագանու 8 նիստ:
- Արձակվել է՝ 35 կարգադրություն:

2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

1. Քարակերտ համայնքի 2019թվականի եկամտային մասը կատարվել է՝ 103,5%-ով, որից.

1)սեփական եկամուտներ՝	102,4%
2)հողի հարկի՝	107,5%
3)գույքահարկ իրավաբանական անձանցից	300.7%
4)գույքահարկ ֆիզ. անձանցից	119,8%
5)տեղական տուրքեր	133,7%
6)վարձակալական հողերի վարձավճար	108,1%
7)տեղական վճար	107,8%
8)սուբվենցիա	100,0%

2. Քարակերտ համայնքի 2019 թվականի վարչական բյուջեի ծախսային մասը կատարվել է՝ 76,2%-ով, որից.

1)տեղական ինքնակառավարում	72.4%
2)համայնքային այլ ծառայություններ	67.6%
3)կրթություն և գիտություն	82.4%
4)սոցիալական ապահովություն	64,5%
5)մշակույթ սպորտ և կրոն	71.5%
6)գյուղատնտեսություն	53.8%
7) սան. մաքրում	87.9%
9)Ճանապարհային տնտեսություն	98,6%
10) արտաքին լուսավորություն	90,2%

3. Քարակերտ համայնքի 2019թվականի Ֆոնդային բյուջեի ծախսային մասը կատարվել է՝ 92.4%-ով, որից.

1)շենք շինությունների կապիտալ վերանորոգում	98.7%
2)տրանսպորտային սարքավորումներ	100.0%
3)վարչական սարքավորումներ	48.7%
4)նախագծահետազոտական ծախսեր	60.1%
5)շենք և շինությունների կառուցում	48.6%
6)այլ մեք. և սարքավորումներ	99,8%

3. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- *Իրականացվել է Քարակերտ համայնքի Թումանյան փողոցի 400գծմ., Շիրազի փողոցի 200գծմ, 5մետր լայնքով հատվածների ընդամենը՝ 3000մք մակերեսով ճանապարհային ծածկույթի բարեկազման և ասֆալտապատում:*
- *Իրականացվել է Քարակերտ համայնքի Թումանյան փողոցի 130գծմ երկարությամբ 5 մետր լայնքով, երկու տեղ անցումով 20մք, ընդհանուր՝ 670,0քմ ճանապարհային հատվածի ասֆալտապատում:*
- *Իրականացվել է Քարակերտ համայնքի Նարեկացի փողոցի 98.0մք., Սևակի փողոցի 135,0մք, Բաղրամյան փողոցի 80,0մք, ընդամենը՝ 313մք փոսային նորոգման ասֆալտապատում:*
- *Իրականցվել է Քարակերտ համայնքի Գայի փողոցի 250գծմ. Երկարությամբ, 5մետր լայնքով /մեկ տեղ անցում, երկու թումբ/ ճանապարհային հատվածի ընդամենը՝ 1267մք ասֆալտապատում:*
- *Համայնքի փողոցներում իրականացվել են գիշերային լուսավորության ընթացիկ նորոգման աշխատանքներ:*
- *Սահմանված կարգով իրականացվում համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները:*
- *Իրականցվել է Երկաթուղայինների և Պ. Սևակ փողոցների նոր գիշերային լուսավորության ցանցի կառուցումը:*

4. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի ընթացիկ հաշվառումը, կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը,

- Քանդված այգիների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացվել է մարզպետարան, որի վերաբերյալ տրվել է եզրակացություն,
- Իրականացվել է հիմնված այգիների վերաբերյալ ակտերի կազմում,
- Անշարժ գույքի կադաստրի ստորաբաժանման կողմից գրանցման նպատակով, քանդված և հիմնված այգիների հողատեսքերը փոփոխելու համար, քաղաքացիներին տրվել են համապատասխան որոշումներ:

5 ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

- Հսկողություն է իրականացվել առևտրի, հանրային սննդի ծառայությունների ոլորտում:
- Տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություններ:

7. ԿՐՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

- Կազմակերպվել է համայնքային ենթակայության երկու մանկապարտեզների, համայնքային կենտրոնի, գրադարանի գործունեությունը:

  Կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ՝ հունվարի 28 (հայոց բանակի օր), Մարտի 8 (կանանց միջազգային օր) , Ապրիլի 24 (Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր), Մայիսի 1 (աշխատանքի օր), Մայիսի 9(հաղթանակի և խաղաղության տոն), Մայիսի 28(Հայաստանի առաջին Հանրապետության տոն), Սեպտեմբերի 21 (Անկախության օր), Հոկտեմբերի 5 (Ուսուցչի օր), Դեկտեմբերի 31 (Ամանոր),

  Բարեկարգվել է համայնքի զբոսայգու նստարանները:
- Կառուցվել է երեք հատ զուրացարան:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Համայնքի տարածքում կազմակերպվել է սոցիալական օգնության ծառայության գործունեություն:
- Կայացել է թվով 4 խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստեր, ընդունվել են համապատասխան որոշումներ:

10. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայություններ, հակահամաճարակային միջոցառումներ:

- Համայնքի տարածքում շահագործվում է երեք հակակարկտային կայաններ, լիցքավորման և սպասարկման համար հատկացվել է՝ 300.000դրամ:

11. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Աջակցություն է ցուցաբերվել զորակոչին, զինկոմիսարիատից ստացված ծանուցագրերը հանձնվել են զորակոչիկներին, իսկ բացակաների վերաբերյալ տրամադրվել է համապատասխան տեղեկանքներ:
- Բանակից զրացրված զինծառայողները սահմանված ժամկետում հաշվառվել են զինվորական կոմիսարիատում և անձնագրային բաժնում:

. Աջակցություն է ցուցաբերվել Արցախյան պատերազմի մասնակիցներին, ապրիլյան պատերազմի 3 մասնակցի տրամադրվել է հանգստյան ուղեգրեր:

.Մշտական օժանդակություն է ցուցաբերվել համայնքի տարածքը սպասարկող ոստիկանության Բաղրամյանի բաժնի աշխատակիցներին, հասարակական կարգը պահպանելու, վարչական և քրեական իրավախախտումները բացահայտելու և կանխելու նպատակով:

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

- Խմելաջրի բացակայություն.
- Գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում.
- Նոր աշխատատեղերի ստեղծում.
- Հակակարկտային կայանների տեղադրում.
- Ներտնտեսային ոռոգման համակարգի վերանորոգում:

ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՀԵՐ ՀԱՐԹԵՆՅԱՆ

2020թվական փետրվարի 10
Գ. Քարակերտ

Արմավիրի մարզի Քարակերտ
համայնքի ղեկավարի 2019թվականի
երկրորդ կիսամյակի և տարեկան աշխատանքային
գործունեության հաշվետու ժողովի

Գ. Քարակերտ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10.02.2020թ

2020թվականի փետրվարի 10-ին ժամը՝ 14:00-ին Քարակերտի համայնքապետարանում տեղի ունեցավ Քարակերտ համայնքի ղեկավարի 2019թվականի 2-րդ կիսամյակի և տարեկան աշխատանքային գործունեության հաշվետու ժողովը :

Մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ ՝ Արսեն Ղուկասյանի, ավագանու անդամների, ՀՈԱԿ-ների տնօրենների և համայնքի բնակիչների

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Արմավիրի մարզի Քարակերտ համայնքի ղեկավարի 2019թվականի 2-րդ կիսամյակի և տարեկան աշխատանքային գործունեության հաշվետվությունը:

Լսեցին- Արմավիրի մարզի Քարակերտ համայնքի ղեկավարի 2019թվականի 2-րդ կիսամյակի և տարեկան աշխատանքային գործունեության վերաբերյալ համայնքի ղեկավարի զեկույցը:

Մ. Հարթենյանը ժողովի մասնակիցներին մանրամասն ներկայացրեց 2019թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին, հատկապես

1. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ,
2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ ,
3. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ,
4. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ,
5. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ,
10. ԿՐՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ,
11. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ,
12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ,
13. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ՝ համաձայն հավելվածի:

Քարակերտ համայնքի ղեկավար՝ Մ. Հարթենյան